ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 103-րդ հոդվածի 3-րդ մասը, 120-րդ հոդվածի 3-րդ մասը, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 47-րդ հոդվածի 4-րդ մասը, 48-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետը, 97-րդ հոդվածի 3-5-րդ մասերը, 99-րդ հոդվածի 1-ին մասը, 107-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, ինչպես նաև Ազգային ժողովի աշխատակարգի XV գլուխը՝ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցությունն իր 2020 թվականի օգոստոսի 12-ի նիստում

Ո Ր Ո Շ Ե Ց

հանդես գալ նախաձեռնությամբ և ներկայացնել «Արտակարգ դրությունը վերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշման նախագիծը:

126 Է. Մարուքյան _____

125 Գ. Գորգիսյան _____

123 Ս. Ալեքսանյան _____

116 Ա. Խաչատրյան _____

124 Գ. Բաղդասարյան _____

117 Ա. Սամսոնյան _____

127 Մ. Թանդիլյան _____

118 Հ. Բաբայան _____

128 Է. Անդրեասյան _____

119 Ա. Եղիազարյան _____

129 Ռ. Ստեփանյան _____

120 Ա. Կոստանյան _____

130 Տ. Սիմոնյան _____

121 Կ. Սիմոնյան _____

131 Հ. Այվազյան _____

122 Ս. Գրիգորյան _____

132 Ս. Մինասյան _____

ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
0095 Երևան, Բաղրամյան 19 (+374 11) 513 423
www.brightarmenia.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ

12 օգոստոսի, 2020թ.

Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի նախագահ
ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Հարգարժա՛ն պարոն Միրզոյան,

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 103-րդ հոդվածի 3-րդ մասը, 120-րդ հոդվածի 3-րդ մասը, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 47-րդ հոդվածի 4-րդ մասը, 48-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետը, 97-րդ հոդվածի 3-5-րդ մասերը, 99-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև Ազգային ժողովի աշխատակարգի XV գլուխը՝ Ձեզ ենք ներկայացնում «Արտակարգ դրությունը վերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշման նախագիծը:

Կից ներկայացվում են՝

- որոշման նախագիծը,
- նախագծի ընդունման հիմնավորումը,
- խմբակցության որոշումը Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու մասին:

Նախագծի հիմնական զեկուցողն է Էդմոն Մարուքյանը:

Հարգանքով՝ **ԷԴՄՈՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ**

ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետություն
0095 Երևան,
Բաղրամյան 19, 134

Republic of Armenia
Yerevan 0095
19 Baghramyan Street, 134

+374 11 513 423 | www.brightarmenia.am

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը
ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 120-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» 298-Ն որոշմամբ հայտարարված և 2020 թվականի օգոստոսի 12-ի «Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականի մարտի 16-ին հայտարարված արտակարգ դրության ժամկետը երկարաձգելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշմամբ երկարաձգված արտակարգ դրությունը վերացնել:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Արտակարգ դրությունը ևս մեկ անգամ երկարաձգելու որոշման մեջ նշվում է, որ չնայած նկատվում է վարակի աճի տեմպերի նվազում, այնուամենայնիվ շարունակում են բարձր մնալ վարակի հետևանքով մահացության դեպքերի քանակը և վարակի տարածման ցուցանիշները: Սակայն նույն որոշմամբ նախատեսվում են նաև որոշ մեղմացումներ: Մասնավորապես վերացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետություն մուտքի արգելքը՝ պայմանով, որ եթե մուտք գործող անձի նկատմամբ չի կիրառվում հոսպիտալացում, ապա վերջինս 14 օրով ինքնամեկուսանում է: Իսկ այն դեպքում, երբ այդ 14 օրվա ընթացքում վերջինս թեստավորվում է, թեստի բացասական պատասխանի դեպքում ինքնամեկուսացման ռեժիմը փոխվում է: Վերացվում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում հավաքների և գործադուլների արգելքը՝ սահմանված հակահամաճարակային կանոնների պահպանման պայմանով, այն է՝ դիմակի կրում և առնվազն մեկուկես մետր սոցիալական հեռավորության պահպանում: Ինչ վերաբերում է ընտանեկան արարողությունների և ժամանցային բնույթի միջոցառումների կազմակերպելուն, անցկացնելուն և դրանց մասնակցությանը, ապա դրանք թույլատրվում են թե բացօթյա և թե փակ տարածքներում առավելագույնը 40 անձի մասնակցությամբ՝ պարետի կողմից սահմանված անվտանգության կանոնների պահպանման պայմանով: Վերացվում է նաև մաքսային սահմանով ապրանքների փոխադրման սահմանափակումներ կիրառելու հնարավորությունը, ինչպես նաև վարակակիրների հայտնաբերման և ինքնամեկուսացման նպատակով էլեկտրոնային հսկողության կարգում հստակեցվում է միայն վարակակիրների, կոնտակտավորների և ինքնամեկուսացված անձանց մասով համապատասխան տվյալներ ստանալու հնարավորությունը՝ ոչ ավել քան 14-օրյա ժամկետի կտրվածքով:

Այս ամենին զուգահեռ՝ անորոշ մնաց սահմանների վերաբացման հարցը: Ինչպես արդեն նշել ենք, համաճարակի տարածումը կանխարգելող անհրաժեշտ սահմանափակումները հնարավոր է պահպանել նաև այլ իրավական ակտերի՝ «ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքների կիրառման շրջանակներում:

Արտակարգ դրության ժամկետի երկարաձգումը մեծ հարված է հասցնում մեր երկրի բոլոր ոլորտներին, կրկին հիմք հանդիսանում այլ երկրների կողմից մեր երկրից մուտքի արգելքների պահպանմանը:

Գտնում ենք, որ արտակարգ դրության ժամկետի երկարաձգումն այսօր ունի այլընտրանք, որը չի վտանգում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների առողջությունը: Սահմանված հակահամաճարակային կանոնների պահպանումը հնարավոր է այլ իրավական ակտի գործողության շրջանակներում:

«Լուսավոր Հայաստան» խմբակցությունն իր պատրաստակամությունն է հայտնում արտահերթ նիստի շրջանակներում օժանդակելու իշխանությանը՝ «ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքներում համապատասխան լրամշակումների կատարման հարցում: